արդիւնք ընդհանուր շահերի, կը դառնայ միանգամայն բնական ու ցանկալի բոլոր կողմերի համար անխտիր։ Ո՛չ Վրաստանը, ո՛չ Ադրբէջանը եւ ո՛չ Հայաստանը ի վիճակի են ստեղծուած պայմաններուն՝ կատարելապէս անկախ ապրելու։ Նրանք իրար կարիքն ունին եւ փոխադարձաբար իրար լրացնում են։ Միմիայն սերտօրէն միացած, ներքնապէս ամրակազմ Անդրկովկասը հնարաւորութիւն ունի՝ ստեղծելու եւ պահպանելու քաղաքական ինքնուրոյն գոյութիւն։ Վերջինս անկարելիութիւն պիտի դառնայ, եթէ այդ միութեան միջից հանուի նրա բաղադրիչ մասնիկներից մէկը, թէկուզ ամենաթոյլը։ Մեր հարեւանները չարաչար սխալւում են — մանաւանդ վրացիք — եթէ կարծում են, որ անկարելի բան չէ Անդրկովկասի միութիւնը այս կամ այն ձեւի տակ — դաշնակցային, համադաշնակցային կազմ կամ այլ ինչ — առանց Հայաստանի եւս, մինչեւ իսկ՝ նրա դէմ ու նրա հաշուին։ Մեր հարեւանների նման դատողութեան ելակէտը ո՛չ թէ ներքին — անդրկովկասեան ուժերի հաշուառումն է, այլ՝ արտաքի՛ն ուժերի։ Այդտեղ է նրանց հիմնական սխալը։ Բայց նրանք, յատկապէս վրացիք, այդպէս դատելով՝ մոռանում են, որ արտաքին աղդակները միմի երկսայրի սուրեր են։

II

Այսպիսով մի կողմից կովկասեան ժողովուրդների համադաշնակցութեան խնդիրն է առաջ գալիս, իսկ միւս կողմից՝ Հայաստանի եւ իր արտաքին հարեւանների յարաբերութեան խնդիրը։ Այս վերջինների թւում առաջին տեղը տալու է բնականաբար, Ռուսաստանից դուրս, Տաճկաստանին։

Մեր արտաքին հարեւանների շարքում է գտնւում նաեւ Պարսկաստանը։ Որպէս արտաքին աղդակ անտես առնելու չէ վերջապէս Ֆիւրդ տարրը։

Եւ սակայն այդ հարցերը ինքնին այնչափ բարդ են եւ ծանրակշիռ, որ անկարելի է այս շրջանակում հանդամանօրէն կանդ առնել նրանց վրայ։ Երբ մենք ձեռք զարկենք Հայաստանի եւ նրա հարեւանների փոխադարձ յարաբերութեան խնդիրը շօշափելուն, մտածում էինք պարզել մեր տեսակէտները եւ խոհերը ո՛չ միայն մեր ու մեր անդրկովկասեան, այլ մեր ու մեր արտաքին հարեւանների քաղաքական յարաբերութեանց մասին։ Եւ սակայն շատ չուտով եկանք այն համոզման, որ քաղաքական դատումները ընթերցող լայն հասարակութեան համար որեւէ օգուտ ունենալ չեն կարող առհասարակ ամէն մի դատողութեան հիմք կազմող իրակա՛ն վիճակը տուեալ երկրի մնում է անծանօթ։ Ուստի դերադասեցինք՝ «Հայրենիք»-ի ընթերցողներին նախ եւ առաջ նիւթեր տալ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբէջանի, այլ եւ Անդրկովկասի փոքր ազգութիւնների մասին — այդ երկիրների տարակարծութեան, նրանց բնակչութեան թուի, տնտեսական եւ մշակութային կարողութեանց, հողային յարաբերութեանց մասին, եւայլն։ Այդ արինք այն համոզումով, թէ միայն ճշդրիտ ծանօթութեամբը մեր եւ հարեւան երկիրների՝ հնարաւոր է մշակել մի քաղաքականութիւն, որ ամուր կեցած լինէր իրական դետնի վրայ, թէ՝ ամէն մի ուղեղիծ ելակէտ ունենալու է սեփական ուժերի գիտակցութիւնը եւ հարեւան ուժերի ճանաչութիւնը առանց սուորադնահատելու, բայց եւ՝ առանց դերադնահատելու նրանց։

Հայաստանի եւ հարեւան երկիրների իրականութիւնը պարզելուն զուգընթաց՝ մենք արինք մեր դատումները եւս, պարզեցինք որոշ տեսակէտներ, հարկաւ ելակէտ ունենալով Հայաստանի քաղաքական շահերը։ Մենք ներկայացրինք Անդրկովկասի ներսը գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները եւ նրանց պատճառները, ներկայացրինք յատկապէս այն հողային պահանջները, որ Հայաստան ունի հարեւան երկիրների հանդէպ։ Անտես չարինք վէճի առարկայ խնդիրների պատմական կողմը եւս։

Հայաստանի եւ նրա արտաքին հարեւանների փոխադարձ յարաբերութիւնը բարմակողմանիօրէն լուսաբանելու համար հարկ պիտի լինէր նոյնպիսի մանրամասնութեամբ կանգ առնել նաեւ այդ վերջինների վրայ։ Բայց որովհետեւ առանց այն էլ սպասածից շատ ընդարձակուեցաւ այս յօդուածների շրջանակը, ուստի կը բաւականանանք համառօտ ակնար-